

Թ. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ

ԱՐՄԵՆ ԹՈՒՄԱԽՅԱՆ



ՀԱՅԿԱԴԱՐԱՆ. — ԱՌԱՋԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ
ԱՎԱԶԱԿԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ. — ՄԵՐԿԵ-ԿՈՒԼԱԲԻ
ՏԵՐ - ՄԶՐԱՆ. 1791-1792 Թ. Թ.

„ՀԵՐՄԵՍ“ ՀՐԱՏԱՐԱԳՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ. — 1926

59





ԱՐՄԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՊԵՏԵՐՍԲԱՐԴԻ Կ. Դ. ԳՐԱԴՍԿԻ ԳԻՐԴԱՐԱՆ

ՔԱԴ. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ

301 (47.925) (092 Paper Sample)

Ա-78

ՍՏՈՒԳԱՍՏ Է 1961 թ.

323

Ա-77

ԱՐՄԵՆ ԹՈՒՄԱԽՅԱՆ

ԳԼԵՂԱՆ-ՊԱՏՄԱՆԱՆ ԱՆՆԱԲԵ

5839

5839

ՀԱՅԿԱՆ ԳԼԵՂԱՆ — ՍՏՈՒԳԱՍՏԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ
ԱՎԱՐՁԱԿԸ ՀԱՅՈՅ ՄԵԶ. — ՄԵՐԿԵ-ԿՈՒՂԱԲԻ
ՏԵՐ-ՄԶՐԱԽ. 1791-1792 թ. թ.

№ 6,

“ՀԵՐՄԵՍ” ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1926.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ,
ՄԱՐԲՍԻ ՓՈՂ. № 29

ԳՐԱՌԵՊ. 671Բ
ՏԻՐԱԺ 1000

ԳԻՈՐԵՊԻԱՐԻԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

1958

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ

ԱՐՍԵՆ ԹՈՒՄԱԽՅԱՆ

(ՀԱՏՎԱԾՆԵՐ ՆՈՐ ՎՈԳՈՒ ԹՈԹՎԱՆՔՆԵՐԻՑ)

Ա. ու ա ջ ա ր ա ն

- I. Ռազմավարական հայացք հայ անցյալի մասին:
- II. Տաճկանայ խնդիրն ու հասարակական խմբերը:
- III. Հողի վեժի նվազներն ու դարձի բարձր:

ԱՌԱՋԱԲԱՆ

Արսեն Թախմախյանի յուրորինակ ու շատ հետաքրքրական հայացքների մասին առաջին անգամ հիշատակություն արել էյինք մեր՝ 1913 թվականին լույս տեսած «Միջայել Նալբանդյան» վերնագրով գրական-պատմական վերլուծություն մեջ (Վաղարշապատ, էջ 50—53 ու 60—62)։ Մեկ տարի հետո, 1914 թվականին, նպատակահարմար դատեցինք հիշատակածս ու այլ նորանոր հատվածներինց սզտվելով՝ տալ այս մոռացված գործչի աշխարհայացքի հակերճ բնութագրերը, վոր և նույն ծառում կեղծանունով հրատարակվեց «Հորիզոն» թրաթերթում (Թիֆլիս, 1914 թ. № № 66, 80 ու 95)։

Փսվտխված հանգամանքներն այժմ հնարավորություն են առլխո նույն այս աշխատությունն իրրե առանձին գրքույկ հրատարակելու հեղինակի իսկական անունով։

Այն ժամանակ—12 տարի առաջ—մեր փափաղն եր այս գրական-պատմական ակնարկով վոչ միայն ընթերցողների մոքում հետաքրքրություն, իսկ սրտում՝ կարեկցություն ու հարգանք շթրժել գեղել Արսեն Թախմախյանը, այլև աղնիվ գրգիւ զարթնեկ այս տարաբախտ գործչի վողջ մնացած ընկերների ու ծանոթների հողում՝ խղելու փնտաակար լսությունը և ի լուր աշխարհի պատմելու նրա կյանքի ու մանավանդ խորհրդավոր սպանության մասին իրենց բոլոր իմացածը։

Այնուհետև մենք հույս ունեյինք ներկայացրած որինակով համոզելու ուսումնասիրողներին, թե վոչ միայն առաջնակարգ, այլև յերկրորդական ու յերրորդական համարված գործիչներին կյանքի ու յերկրին հետազոտությունն ել կարող և յերբեմն նույն իսկ շատ արժեքավոր փաստեր մատակարարել հայ հասարակական մոքի գարգացման պատմությունով հետաքրքրվողներին։ Այս համոզումը կըզրդեր նրանց՝ չսահմանափակվելու անվանինների նեղ

աւ ավանդական շրջանակով, այլ նորանոր փաստեր վորսնելու փոքրահոշակների ու անհարտ մնացածների շարքերում ել:

Հիմա, մեր որերում, յեթե այս գրական-պատմական տկ-
նարկը, բացի վերոհիշյալից, կարողանա նաև մի փոքրիկ հիշե-
ցումն լինել այն մասին, թե պետք է ավելի ուշադիր ու մարք-
սխտական տեսակետից ավելի գիտակցական վերաբերմունքի տ-
ռաքիլա դարձնել հայ աշխարհայացքների պատմությունն, ապա
մենք կրնամարենք, վոր առաջարկվող աշխատությունը լիովին հա-
սել է իր նպատակին:

Գրվածքը վերատպւում է անփոփոխ: Դեմոկրատական
պատմահայացքի մասին խոսած տեղում միայն անհրաժեշտ համա-
րեցինք ավելացնել մեկ հասիկ ծանոթություն Շահամիր Շահա-
միրյանի մասին: Հայ բուրժուազիայի խոշորագույն իդեոլոգի աշ-
խարհայացքը մեկ պատիկ ծանոթության մեջ խոսկու բան չե
անշուշտ, բայց և լայնօր մեր շնոր բորբոքման մարգարէյին այս
մասում ամենեւին չհիշատակելն էլ աղադակող անարդարություն
կըլիներ: Առայժմ լավ է քիչ, քան վոչինչ: Ավելին ասվելու յե-
նրան նվիրած հատուկ ուսումնասիրության մեջ:

Հոգւածիւ մի քանի տողերը կարդալիս պետք է մտաբերել,
վոր ակնարկը գրված է 1914 թվականի փետրվարին, յերբ ռուս-
գերման հայտնի բանակցություններն էյին տեղի ունենում Տաճ-
կա-Հայաստանի վիլայեթներում բարենորոգումներ մտցնելու մա-
սին:

Իրրե հավելւած՝ գրական-պատմական տկնարկիս կցել ենք
«Առաջին գաղափարական տվագալը հայոց մեջ—Մերկե-Կուլարի
Տեր-Մարտի. 1791—1792 թ. թ.» վերնագրով մեր հոդւածը, վոր
անփոփոխ արտատպւում է 1919 թվականի ապրիլի 6-ին Յերեւ-
նույի հրատարակված «Նվեր վորբերին» միութեւ թերթից:

Թ. Ա.

1926 թ. ապրիլի 12-ին.

Յերեւան:

Տաճկահայ ազատագրական շարժման փառապատկարազուլաներից չէր Արսեն Թոխմախյանը։ Նրա անունը չի դրվում Մկրտիչ Խրիմյանի, Ռաֆայել Պատկանյանի, Միքայել Նալբանդյանի, Բաֆֆու, Գրիգոր Արծրունու ու մյուսների անվան կողքին։ Նա վոչ մեղբաշուրթն հրավիրակ էր, վոչ շանթառաք ռազմեղու, վոչ գիտուն թեորհտիկ, վոչ բոլորոքով վիսլատան ու վոչ էլ ազգեցիկ զեկավար։ Քչերը լսած կըլինեն նրա մասին, ավելի քչերը՝ կարդացած սակավաթիվ յերկերը։ Ընթերցողներից վոմանց թերեւ հայտնի չէ նրա վողբերգական մահը, բայց կյանքն ընդհանրապէս անծանոթ է զրազեա բազմությանը։ Կենդանի ժամանակակիցները չեն պատմում նրա մասին, իսկ բազմադրազ հետնորդների մեջ էլ չդանվեց մեկը, վոր «Արի, էկ արտաքս» գոչեր այս մոռացված մշակին։

Ո՞վ է նա։

— Մեկը Վատպուրանի Արծվի ձագուկներից, մի կայծ Խրիմյանի հնոցից, Վարազա զպրոցի աշակերտ, անադմուկ վարժապետ, համեստ դոսախոս, առաջագեմ աշխատակից և ապա վերջապէս մի անմեղ նահատակ՝ այրված խարուչկով, վոր պատրաստել էր յեղբայրասպան ձեռքը։

Չորապէս չէր, այլ սոսկ դինվոր, բայց ինչպէս հաճախ է պատահում, այս հասարակ մարտիկը յերբե-

մըն շատ ավելի հեռու յեր տեսնում և ճիշտ ըմբռնում թշնամու շարժումները, քան այլ մեծանուն հրամանատարներ:

Այժմ, յերբ 35 տարի հետո նորից հնչում և բարենորոգումների ավետիքը տաճկահայի ականջին, յերբ այլ տեղերի հայեր մեծամեծ հույսերով ու ակնապիշ սպասում են այս դատի յեկրին, արժե հիշել Թոխմախյանի մի քանի կարծիքները, վորոնք կապ ունեն այս խնդրի հետ և վորոնց մեջ խոսում և մի բացատրիկ, նորաբխակ ու ազնիվ արամություն, տրամություն, վոր առաջանում և դեպի անբաղդ հայ գյուղացին ունեցած մեծ սիրուց ու այն գիտակցությունից, թե այս թշվառ դատակարգից զուլումն յերբեք պակտս չե յեղել անցյալում:

Սակայն չշտապենք տալ, այլ ուշադիր ու կարգով լսենք հայ շինականի բարեկամի թախծալի տըրտունջները: Լսենք մի քանիսը նոր վորդու թոթովանքներից, վորոնք հնչում եյին 30 տարի առաջ:



Նախ անցյալի մտախն:

Յեթի մի ուսումնասիր նյութ ընտրե պատմական հայացքների գարդացումը հայոց ուշխարհում, ապա հեղտությամբ կընկառեմ, վոր մեր նոր գրականության հեղինակների մեծամասնությունը ներկայի ու ապագայի վերաբերմամբ աամկափարական սկզբունքների դավանելով հանդերձ՝ մոռանում և նույն սկզբունքները, յերբ բերան և բաց անում հայ անցյալի մատին խուսելու համար:

Նրանք թեև ներկայումս ձգտում են ժողովրդի գերիշխանության, սակայն միևնույն ժամանակ յերեսանկյալ հիանում են հայրենի հարստություններին մանր ու մեծ փառատենչ ինքնակալներով, զայլալուծ աշտ ու աշն նախարարի ափերից արկածներին մասին, յերգում կորցրած գահն ու թագը, սուրն ու դրոշը և այլն, մի խոսքով՝ վազկորվում աշն կարգերով, յերբ գոռոգ տոհմապետն ու խորամանկ քուրմը, սիգացող իշխանն ու հեղահամրույր երեցն ի Քրիստոս Յիսուս տիրարտը վայելում ելին սարուկ ամրոխի արգար աշխոտանքի արդյունքները:

Բարեբաղդարար աշտ մեծամասնության հակառակ՝ մեղանում ել յեղեկ են անհատներ, վորոնք յերբեմնապես ազատվելով արխատկրատական իդեոլոգիայի ազդեցությունից՝ հետևողական դեմոկրատներ են հանդիսացել՝ հայ անցյալի վրա յեկ նայելով արհամարհված ամրոխի համարձակ պաշտպանի տեսակետով:

Բազմաթիվ չեն սրանք:

Ահա մի Մեսրոպը Թադիազյան, վոր երեանցիներին զրած նամակում աչքալուսանք և տալիս հայրենակիցներին պարսից լծից ազատվելու համար և ափելացնում, թե հայերն յերբեք այսպիսի ազատ որեր չեն տեսել և վոչ նույն իսկ Արշակունյաց որերում, յերբ, ճիշտ և, «թաղավորությունն իրենցն եր, բայց գուշումըն ամենեկին պակաս չեր»:

Ահա մի Մատթեոս Մամուրջյան, վոր հայկանորեն Թոմաս Բոկլիի ազդեցության տակ զայլուլթի շանթեր և ցոլացնում հայ պատմագիրներին, մասնավորապես Քերթոզահոր հասցեյին աշն պատճառով, վոր նրանք խոսում են միայն ու միայն թագավորների, կաթուղի-

կոսների ու սրանց արքանյակներն մասին և անտես են առնում այն ժողովուրդը, վոր սրանց կերակրել և դարեր շարունակ:

Ահա մի Ռափայել Պատկանյան, վոր հայ պատանուն յերգել և տալիս

«Հայկ ու Լեոնին մոռանանք, յեղբարք,

Թափ տանք մեզանից փոշին հնության...»

և ընկերներից մեկին գրած նամակում հաղորդում և այն մասին, թե պատրաստել և հայոց պատմության դիրք, թեև փոքրածավալ, բայց մեծարժեք այն աեսակետից, վոր «Թագավորների պատմությունն չի, այլ ազգի»:

Ահա մի Միքայել Նալբանդյան, վոր կարճատես ու կիսագրագետ մարդկանց և թողնում ազգային պատմության փլատակները քրքրելով դվարձանալու ու ցնծալու թեթևամիտ գրադմուսքը, մինչդեռ իրան վերապահում և միայն վողբալ ու մորմոքվել հրապարակելով ու խոստովանելով այն տխուր ճշմարտությունը, թե «մեր պատմության միջից փոշին չի մխիթարում մեզ» և թե «հայ ազգի կառավարության կերպը ամենեւին նման և յեղել անբաղաքացի ազգերի կառավարության կերպին»:

Ահա մի Բաֆֆի, վոր իր նշանավոր վեպի առաջաբանում գանգատվում է, թե ինչպես մոռացված է ամբողջը հայ ազնվապաշտ մատենագիրների կողմից:

Մեկ յերկու այլ անուն ել, և մենք ահամայից դադարեցնելով այս թվարկությունը՝ պիտի տարակուսած շուրջներս նայենք և անպատեհաբար մութիկմութիկ պեղումներ անել մեր գրականության մեջ՝ առմ-

կալարական պատմական հայացքի նմուշներ գտնելու համար։*

Արսեն Թոնմախյանը մեր մատնանշած հետևողական ժողովրդագաղաչոներից և, և նրա՝ հայրենի անցյալի

* Հետազոտում կատարած հետազոտությունները մեզ բերին այն յեղրակացություն, վոր հայոց պատմության նկատմամբ ուսման կալարական հայացքի կողմնակիցների կարապետ ու նշանավոր ներկայացուցիչ պետք և համարել «Վորոգայթ փառացի» հեղինակին, ընդ վորում մենք գտանք նաև, վոր այս գիրքը հրատարակվել և վոչ թե 1773-ին, ինչպես տպագրված և գրքի վրա, այլ բավական հետո, և նրա հեղինակը վոչ թե Հակոբ Ծահամիրյանն է, այլ սրա հայրը—հնգկտհայ նշանավոր գործիչ Ծահամիր Ծահամիրյանը։

«Վորոգայթ փառացի»-ի վորոշ հջերը, վորոնք խուժաղուժ գրաբուրի ու բարբարոս կետադրություն շնորհիվ դժվար հասկանալի յեն, աշխարհաբար թարգմանություն մը ու կանոնավոր կետադրությամբ խիստ արմատական դույն են ստանում, և նրանց հեղինակի մոտ, վոր ապրել և XVIII դարում և գրել Փրանսական մեծ հեղափոխությունից առաջ, չափավոր հայացքի տեր են յերևում այս կողմից Միքայել Նալբանդյանը, Ռաֆայել Պատկանյանն ու Բաֆֆին, վորոնք ոտքել և գրել են 1780, 1830 ու 1848 թվականների հեղափոխություններից հետո։ Հայ անցյալի մասին ել խոսելիս Ծահամիրյանը դատում է, ինչպես թագավորական ու իշխանական ինքնակալության համոզված հակառակորդ։ Այդ անցյալը նրան յերևում է, իրեն մարմնացած ժխտումն ուսման կալարական սկզբունքի, ուստի և «յերրորդ դասի» անխնա մարտիկը կտապալորեն խարազանում և հայոց պատմության անցյալ շրջանները, վորոնք անդկտակից ուրիշներին դմալիլի դույներով ելին պատկերանում։

«Թող հայոց աղղը հոժարե, — գրում էր նա, — և անշտապ ուշադրությամբ քննե անցյալ ժամանակի հասնացած քնքերը և միտքը բերե այն ասհուն վնասը, վոր յեկավ հայոց աղղի ու աշխարհի վրա, վնաս, վորի պատճառն ինքնակալ իշխանական ու ինքնապաշտ մարտիկն էր»։

մասին ասածները հայ դպրութեան մեջ գեմոկրատական հայացքի թանգագին բեկորներն են:

Թոխմախյանի ժամանակ հայոց պատմութեան սոցիոլոգիական ըմբռնումն համարյա գոյութիւն չունէր: Մասնագետներին ու գիլետաններին չէր հետաքրքրում հին հայոց հասարակական կազմակերպութե-

ն երեսէ յերես: Յեթե յերեսն յերեսն թագաւորութիւնը վիճակ-
վեց բարի մարդանց, ապա մեր ոգու տն աղէկ է չե-
ղ աւել, բան տայն, վոր մենք յեղանք ու մնա-
ցինք նրանց ստորուկն, այլ և ժամանակ առ ժամանակ
մարդու բնութեան փոփոխական լինելու հետեանքով սաստիկ
նեղութիւնն էր կրեցինք նրանցից: Իսկ յերբ
թագաւորութիւնը վիճակվեց, ընդհանրապէս, չար ու անբար
մարդկանց, սրանք ազատութեան պատվից ու յերջանկութեանից
մեզ գլորեցին ցած... Թեպետև մենք ախտաւոր ենք, վոր ինքնա-
կալութեն կառավարած Հայկի, Տիգրանի, Արմենի (sic!) ու մեր
այլ բարեբարները յերջանիկ ժամանակն անցաւ, և մենք զգուշա-
ցանք ու չփակեցինք մեր փոփոխական բնութեան գոնիքն (այսին-
քէն՝ սամկաւարութիւն չհաստատեցինք, Թ. Ա.) սակայն մեր
թիւքն աւելաւ, ինքնաւորութեամբ ու քաջ հրա-
մայող տեղերի ժամանակի անցած լինելու
համար պէտք է գոհութիւն մատուցանենք
և փառք տանք Աստուծուն, վոր մենք միայն
տայնք մնաւ վնասով պիտանք, և նրանք մեռան և թաղ-
վեցին գերեզմաններում: Իսկ մեր այն իշխողները, վորոնք ամբա-
րջաւանալով անիրաւացան և դոռողութեամբ ու ինքնահաճու-
թեամբ վարեցին իրենց իշխանութեանը Հայոց աշխարհում գրե-
կէլով, կողմ աւելուցին մեզ և անասնակաւ
բնութեամբ անցկացնելով իրենց կյանքը
ժամանակն էր, — նրանք իրենք կորան դնացին և կորցրին
մեր պատիւը, Հայոց ազգի սերունդը գերութեան մասնեցին, աշ-
խարհն էլ ուրիշ ազգերի ժառանգութիւն դարձրին: Կորսաւ մաս-
նիկ յերկիրն, ընկաւ ինքնակալ իշխանութիւնը, կորան և ցրվե-

նր: Գիտական ջանքեր թափում էին բացառապես դեպքերի, անձերի ու թվականների ստուգութեան վերա: Ահա սլառամագիտական այս դալտոնիզմի շրջանում հնչում է ձայնը այս «աղայի», վոր ավելի պարզ ու ճիշտ էր պատկերացնում հայ անցյալի էությունը, քան այլ «իմաստուններ ու գիտուններ»:

«Այն յերկիրը, ուր ես մի քանի ամիս առաջ պըտըտեցի,—գրում է Թոխմախյանը Պարսկա-Հայաստանի մի գավառին նվիրած գրքույկում 1882 թվին,—նախն ձ ա ն ու մ ա ր թ ն ա ց ր ե ց հ ի շ ա տ ա կ ու թ յ ու ն ն ե ր ք ի ը՝ հ ի ն հ ա յ ե ր ի կ յ ա ն ք ի ն մ ա ն ու թ յ ա մ ք ր: Թեև այնտեղ չկան հայեր այժմ, այնտեղ ապրում են թուրքեր, բայց ապրում են հին յեղանակով: Պ ա տ մ ա կ ա ն ն ա խ ա ր ա ր ն ե ր չ կ ա ն, ք ա յ ց կ ա ն խ ա ն ե ր, ց ե ղ ա պ ե տ ն ե ր,

ցին խխաններն, իսկ անմեղ գառները մինչև այսօր մնացին զիշտ-տիշ գայլերի բերաններում...»

«Արդ հարցնում եմ քեզնից, բնթերցող, ասա ինձ, բարեկամ,—աղաղակում է ցասկոտ Շահամիրյանը՝ մի սեղմ ու անողոր բաժնակով արտահայտելով յուր պրեքյուկան վերաբերմունքը հայ անցյալի նկատմամբ,—միթե կամենում ես նորից ընդունել (վեբականգնել) այն սարսափելի «երօրյունը, վորի ճանաչման արքյունը բաժնեցեղ եր միմիայն միեջևի գաւառապահ, իսկ վեսար եսեղ միեջևի գլուխ... (Շահամիրյան «Որդայի Կատալ», Ղուկասյան մատենադարան, Թիֆլիս, 1913, հջ 18, 34 ու 35):

Հայ առևտրական կապիտալի զաղտիարախոսի այս սրաթեխաքը, վոր ավել է մեղանից մոտ 150 տարի առաջ, մի յերեվեյի նշանաձող է հայ գաղափարգային աշխարհայացքների պատմութեան մեջ, Ազնիվական գաղափարգի պատմական աշխարհայացքն արդեն մոտենում էր յուր մայրամուտին. հուրճարակ էր սկսուն հայ «յերբարդ դասի» դեմոկրատական պատմահայացքի լուսարացը:

վորոնք նույնպէս ավերում, կրակի յեն տալիս միմի-
անց լերկերները, ֆլասում են ընդհանրութեան իրենց
անձնական թշնամութեան համար: Նրանք նույնպէս տի-
րապետում են միահեծան, ամբողջութեան գոյութեանն
ու կյանքը յենթարկված և անհատի հաճույքին ու կա-
մայականութեանը»:^{*}

Ի հարկէ Թոխմախյանն այս տողերով սթափեց-
նող սառը ջուր և լցնում այն հնապաշտների գլխին,
վորոնք քրտնաթոր վռակեղոծում էին հայ անցյալը:
Բայց պետք և աղդարարել, վոր նրա ասածը լոկ նա-
խատական իմաստով հասկանալու չէ: Նրա հիշած նմա-
նությունը գիտական արժեք ունի և ավելի հարադատ
և ներկայացնում իրերի դրութեանն հին Հայաստա-
նում, քան գիտական ժարդոնով գրված ընդարձակ
շաղակրատութեանները:

Նախարարները վոչ այլ ինչ էին, յեթե վոչ խա-
ներ: Անշուշտ, մի Բագրատունի տանուտեր, մի Սյուն-
յաց իշխան, մի Արծրունի սեպուհ կամ Մամիկոնյան
«ազատ» կարող էին յերբեմն ավելի քաջ, խելոք, գրա-
սեր և այլն լինել, քան մի Հասան խան, կամ Իբրա-
հիմ խան, բայց և այնպէս նրանց վերաբերմունքը
դեպի ժողովուրդը միևնույնն էր. թէ առաջիններն ու
թէ վերջիններն, իբրեւ կալվածատեր ազնվական դասա-

^{*} Արսեն Թոխմախյան. «Մասիս լեռների հարավային սառ-
ւոտներ», Թիֆլիս, 1882, Ա. գրքուշի, էջ 25—26: Հոգվածիս մեջ
բոլոր ընդգծումները մերն են:

96/69¹⁷

կարգի անդամներ ապրում էյին ժողովրդի հավելյալ աշխատանքով*:

Իրեն ազգայնության գաղափարի սաշաղան թոխմախյանը բացասում է հայ անցյալը նաև այն տեսակետից, վոր հիշյալ գաղափարի փոխարեն հին հայոց կյանքում իշխել է ցեղի, տոհմի գաղափարը ճիշտ այնպես, ինչպես է մինչև այժմ քրդերի մեջ:

«Ցեղեր ցեղերին յերեք չեն ոգնիլ: Ցեղապետական սկզբմանց մեջ այդ չկա: Մի ցեղը յուր աճելության համար պիտի ճնշե մյուսին: Քրդերը, այդ մեր վայրենացած ազգակիցները, մեր պատմական կյանքի տխուր պատկերն են ներկայացնում: Վերովհետև նրանց մեջ դեռ աղնվականությունը պահպանվում է, վոր մի ազգը անթիվ ցեղերի է բաժանում: Ամեն մի քյուրդ իր ցեղապետի անպայման

* Իսկ խանահայատակ ժողովրդի դրության մասին այս հեղինակը գրում էր. «Իսկայես ասել այս յերկրումը ապրում չե ժողովուրդ, այլ մի տեսակ անասուններ, վորոնք իրենց բոլոր եյուրթյամբ պատկանում են տիրապետողին: Քերթները այն առաջնությունը ունեն, վոր գոնե նրանք կուշտ են վորով, մերկությունը պատասպարված է: Ուղղակի հարկը ծանր չե, քայց անուղղակի տուրքեր բազմաթիվ են: Ինչ վոր խանը վճարում է իրենից դրեղ անձնավորություններին ընծայել կամ կաշառքի անունով, մի խոտքով խանի արած ամեն ծախսերը հոգատակներն են պարտավորվածել: Բացի այդ՝ հոգատակները պարտավոր են նաև խանի ընդարձակ հողերը վարել, ցանել, չրել, արդյունքը տեղափոխել, աշտանաց համար գոմեր շինել, անասունները պահպանել, վորոնք պակասելու իրավունք չունին, նրանք միայն պիտի ծնեն և ափսխանան. որինակ նրա վոչխարներն ու կովերը ամեն տարի անպատճառ պիտի տան մի-մի գառն, մի-մի հորթ և նշանակալ յուրը, պանիրը և բուրդը: Հսկառակ զեպրում դուռդացին պատուխանատու չե: Հողի սեպհական իրավունքին յերկու տերեր կան. կուտավարությունը և խաները: Ամեն մի դուռդացին տասին յերկու տասանորդ է վճարում արմաթիքից և ընդեղեններից» և այլն:

6759

5839

109

գերին ե: Յեւ ինչ կլինեն մեր տաճկաստանցի յիշարաց վիճակը անցյալ մեծ սովին, յեթե մեր նախարարական ցեղերը դեռ ապրել շարունակեցին: Հավատացնում եմ ձեզ, վոր վոչ մի հայ չեր ապրի պատուհասից, և մենք Տաճկահայաստանումը այժմ ազգի տեղը նրա ընդարձակ գերեզմանատունները կգտնեցինք միայն:՝ Նոքա (հին հայերը. Թ. Ա.) ինչպես մի ազգ, ինչպես մի հայրենյաց վորդի յերեք չեն ապրել, յերեք չեն թագավորել: Նրանք բաժանված են յեղեւթամաթի վ. ցեղերի, վորոնք ահա դար կը ծնվ, մաշել են իրար:՝՝ Նախնի հայերը քաղաքակրթության չեն ապրել ինչպես մի ազգ, ինչպես մի կուռավարչակական մարմին»***:

Յերբ Արեմտյան Յվրոպայի մի քանի թերեւորեւ հայտարարեցին, վոր ազգայնութեան գաղափարը ժամանակակից կապիտալիստական տնտեսութեան իդեոլոգիական արտացոլումն է, մեզանում յեղան այս խոսքի վրա խնդացողներ, վորոնք հեզնորեն նկատում եյին, թե այլ է ապրանք և այլ՝ ազգութիւն: Բայց ահա թե ինչ և ասում Թոմասիւսանը, այս խոհուն ազգասերը նույն գաղափարի ծագման մասին:

«Համազգային գաղափարով ապրելու դարեկոտ խը կարելի չեայն թվա կանից համարել, յերբ մեր նախարարական, թագավորական ցեղերը ջնջվել, վերջացել են մեր միջից՝ թող անելով մինչև այժմ շարունակվող տխուր հետեանքնե-

* Ա. դրբույկ, էջ 42—43.

** Նույնը, էջ 21.

*** Նույնը, էջ 23.

ըր: Այդ հետեանքները թերևս այնքան ել յերկար չշարունակվելին, յիժե հոգևորականությունը ազնվականության տեղը չըռներ:»*

Հասկանալի չե, վոր Թոխմախյանը գաղափար չունի տնտեսական այն պայմանների մասին, վորոնք ազնվականության անկման ու «յերրորդ դասի» բարձրանալու պատճառ են հանդիսանում, բայց և այնպես նրա ու Արևմուտքի թեորեաիկների ասածների հիմնական նմանությունն այն է, վոր բոլորն ել ազգայնության գաղափարի հայրենիք են համարում այն միջավայրը, վորտեղ գերիշխող չե կամ բացակայում է ազնվական կալվածատեր դասակարգը: Այս միջավայրը նոր դարին և հասումը: Ազգայնությունը բխողդիական յերևույթ չե, այլ պատմական, սոցիոլոգիական,—կասիր Թոխմախյանը ժամանակակից հասարակագետների նման, յիժե ծանոթ լիներ այժմյան տերմիններին:

«Մեր պատմության մեջ վատ ուսումնասիրվածը, —շարունակում է Թոխմախյանը,—ժողովրդական կյանքի մասն է. մինչև անգամ կարելի չե տեսլ, վոր մեք պատմությունը ազնվական ցեղերի պատմությունն է միայն: Այնտեղ ժողովրդական պարագմունքների և արհեստների մասին վոչինչ չկա: Պատմության մեջ առհասարակ ժողովրդի, այդ ուսմիկ կոչված արարածների վրա խոսվում է այն ժամանակ, յերբ նորա սովից կամ վարակիչ հիվանդություններից ջարդվել են տասնյակ հազարներով կամ մի բռնավորի վրա կոխան են յեղել, գերի յեն գնացել և կամ գաղթել են: Դրանով միայն մենք հասկանում ենք, վոր Հայաստանում ժողովուրդ ել է յեղել: Բայց

* Նույնը, էջ 23:

նա այնքան ստոր եյեղել զոր ջորին
 ների ու աղնի վճի երից եղերն ալիլի
 ւալ մտքով են հիշվում պատմության
 մեջ: Իսկ ապես նա զրոյի նշանակու-
 թյունն եռնեցել զոր թվերի կողքին
 դրվելով գումար եկազմում: Հայ աղ-
 նվականության սիստեմը միշտ ա-
 նասնության աստիճանից հասցրել
 ժողովրդի վիճակը: Ժողովրդական դասակար-
 գից բարձրացած հերոսներ մենք չենք ունեցել մեր
 մեջ. ստրուկների միջից յերեւոյ հերոս չի ծնվիլ»:^{*}

Այս մի քանի հատվածները բավական պարզելով
 Թոխմախյանի հայացքները՝ յերևան են հանում այն
 մեծ տարբերությունը, զոր կա մի կողմից այս հեղի-
 նակի և մյուս կողմից հայ պատմագիրներին ու նոր հե-
 ղինականների մեծամասնության պատմական ըմբռնում-
 ների միջև:

Պատմագրական արխտոկրատիզմի ամենախիզախ
 հակառակորդներից մեկն է Արսեն Թոխմախյանը: Յեւ
 յիթե սա պատահեր Մովսէս Խորենացուն, ապա սրանց
 միջև մեծ վեճ կծագեր. չե՞ վոր քերթողաչայր սգում է
 Հայոց աշխարհի վիճակն այն առթիվ, զոր ազնվակա-
 նությունն ու հոգևորականությունը զրկվել են պետե-
 րից («զի բարձաւ թագաւոր և քահանայ»), մինչդեռ
 Թոխմախյանն, ընդհակառակը, ուրախանում է, զոր
 վերացել է նույն ինքն ազնվականությունը և ցավում,
 զոր վերջինի տեղը բռնել է հոգևորականությունը: Ա-
 լեքսանդրիայի ճեմարանի ու Վարազա զպրոցի սանե-
 րը տանել չէին կարող իրար, և թերևս Խորենացին

* Նույնը, էջ 23:

լինելը պարագլուխն այն ամբողջի, վոր Թոխմախյանի
ածյունը շիրմից հանելով յոթը հովերին կըտար...

Յեթե Թոխմախյանը հայոց պատմութեան գիրք
հորինելը, ապա մենք դառն ճշմարտություններ շատ կը
լսեյինք և յերբեմն ել առիթ կունենայինք կարդալու
ճիշտ աշխարհի ներբողներ, վոր կարգում ենք Հայնեի
«Զմեռային հեքեթում»... Նա կըզայրացնէր շիւ շովի-
նիստներին, բայց ծառայած կըլինէր գերապետն սրբու-
թյուններին—գիտութեան ու դեմոկրատիայի—շահերին՝
այս դեպքում նշանաբան ընտրելով բանաստեղծի տո-
ղերը.

«Արցան փայլով, տանջանքներով անմահացած՝
Խնչպես ցնորք յերևում են որերն անցած.
Յեւ չեմ կարող նոցա նայիլ լուռ պարծանքով,
Այլ մի խորին ցավակցութեան զգացմունքով:
Ի՞նչ մեզ թողին մեր քաջարի, գոված նախնիք.
—Լացի, վողրի անփառունակ մի հայրենիք:
Յե՛վ անձրիւ ծաղկապսակ վառ փունջերի,
Վոր մանկական բերկրութեամբ անմիտների
Վառջին ենք մենք տարածում, յիս մի նշան
Համարում եմ մեր փոքր հոգու աղքատութեան...»*

* Հովհ. Հովհաննիսյան. «Բանաստեղծություններ», Վա-
ղարշապատ, 1908, էջ 18:

II.

Դառնանք ներկային:

Համարձակ կարելի չե ասել, վոր ոռոսահայ կյանքի ու գրականութեան մեջ վոչ մի հասարակական խնդիր այնքան մեծ տեղ չե բռնել, վորքան տաճկահայոցը: Բայց չնայած, վոր վերջին 50—60 տարվա ընթացքում այս բազմին և նվիրել հեղինակն իր հոգեսաստն գրիչը, ճարտասանն իր ալախոս լեզուն, ժողովուրդն իր աղքատիկ քսակն ու յերիտասարդն իր շառագույն արյունը, այնուամենայնիվ սխալ չի լինիլ ասել, վոր մինչև այժմ կուռքն ու զոհաբերողն իրարուց բաժանված են յեղել մի թանձր վարագույրով. տաճկահայի վիճակին մոտից ծանոթ չեն յեղել վոչ միայն ոռոսահայ ընթերցողները, այլ և հորինող ու գիտուն ինտելիգենտները: Այո, հայ մտավորականը, վոր լավում և անխափր հաղարավոր յերկեր յեվրոպական ու ոռոս գրականութեանից, վոր կրկնում և անհամար ոտաբազի գիտնականների ու փիլիսոփաների անուններ, վոր բարբառում և վորոտաճայն տմեն գիտութեանից, ավանդ, տեղեկութեան չունի այն միջավայրի մասին, վորի համար այնքան զոհաբերութեաններ են արել մի քանի սերունդներ:

«Յերկրի ուսումնասիրութեան — ասա ինքնին մի պատկառելի գործ, — գրում և հայ կաղմակերպութեան արտաստանմանի մի հայտնի դիկավար՝ աղակաջներով հետևյալ կսկծալի խոստովանութեանը: — Ա հ ա մ ի գ ո Ր ծ, վ ո Ր ո վ դ ժ բ ա խ ա ա բ ա Ր մ ի ն չ և ո Ր ս շ ա տ ք ի չ և ն ք ղ բ ա ղ վ և Ն, գ Ր ե թ և չ և ն ք

գրադվելի ճավ հիշատակել, վոր քսան տարուց
ի վեր յեղամոխական կազմակերպությունները չեն
կատարել մի հատիկ լուրջ հետադո-
տություն այն տնտեսական ու ցեղային միջա-
վայրի մասին, ուր խողացվել և հայկական կոիվե ու
վողբերությունը: Մենք չունինք գեթ մի
հատիկ լուրջ դործ հարկատվության սխտեմի
կամ սխտեմների մասին հին ուժիմի տակ, չուն-
ենք վոչինչ և հողային ու արհեստային վիճակ-
ների մասին, այլ և այլ ժողովուրդների պարագմունքի,
համայնական կենցաղի, դասակարգային շերտավորում-
ների մասին և այլն: Չկա շատ թեքիչ ար-
ժեքավոր ուսումնասիրություն մեր
գրականության մեջ Թուրքիայի ընդհանուր իրավական
կացության մասին հին ուժիմի տակ, վոր սահմանա-
դրությունը հավանորեն չպիտի կարողանա կամ չպի-
տի կամենա հեղաշրջել շուտ ու արմատապես...»

Յեկ տյա Վչկա, չունինք, չենք գրադվել»-ը վերա-
բերում և վոչ թե հեռավոր Շնիկ ասողին, վոչ թե
բևեռում գտնվող վորևե սառցադատ հողամասի, այլ
մեր հայրենիքի մի կարևոր հատվածին, վորի մասին
խոսելիս սակայն մենք փոխ ենք առնում ուրիշի կո-
կորդի լարերն անպամ: Ահա այս Վչկա, չունինք, չենք
գրադվել»-ն և պատճառ, վոր մենք նույնիսկ մինչև
այժմ տաճկահայ հասարակության գրության ու կո-
րիճների մասին նույն ըմբռնումն ունենք, ինչ վոր ու-
նեյին սրանից 50—60 տարի առաջ:

* Միջայել վարանդյան. «Վերածնվող հայրենիքն ու մեր
դերը», ԿՋ 366:

Այն ժամանակ կարծում էյին, վոր տաճկահայի քոյոր թշվառություններէ միակ պատճառը տիրող քաղաքական կարգերը կամ, ավելի ճիշտը, անկարգությունն էր: Կեղեքող թուրք ու յափշտակող քուրդ—ահա այն դիշատէջները, վորոնք հոշոտում էյին տաճկահայի մարմինը:

Ինչ խոսք, վոր չափազանց ծանր էր տաճկի լուծը, անգութ ու հատու՝ քրդի յաթաղանը, ծովացած էր արյունը և դարհուրելի՝ կոտորածները, բայց և այնպես կարճատեսութուն կրլիններ, յիթե տաճկահայի բ ո լ ո Ր վերքերի պատճառ համարեյինք միայն տիրող բռնակալությունն ու անիշխանությունը ճիշտ այնպես, ինչպես սխալ կրլիններ, յիթե մոռանալով ժամանակակից տնտեսական կարգերի ազդեցությունը՝ Սաղեմի թշվառ զավակներէ—հրեա դյուղացու ու բանվորի աննախանձելի վիճակը վերադրեյինք միայն այն քաղաքական պայմաններին, վորոնցում ապրում են նրանք: Անշուշտ, գովելի չե այն ճիշդն ու մարտը, վոր մղվում է հանուն տաճկահայ ժողովրդի քաղաքական իրավունքների, սաւկոյն և այնպես աշալուրջ դործիչը չափաք է մոռանա, վոր Յեփրատի ու Տիգրիսի հովիտներում խեղճությունն ու աղքատությունը ա յ լ պ ա տ ճ ա ո յ ն է ի ունեն, պատճառներ, վորոնք ավելի ավերիչ ու յերկարատե են, քան քաղաքականապես իրավագուրկ կացությունը:

Արսեն Թոխմախյանն էր այն մտավորականը, վոր 30—32 տարի առաջ, դեռ ևս 80-ական թվականների սկզբին, ամենից ավելի վստոյ մատնանիշ է յիղել այն հիմնական չարքի վրա, վոր արմատ ձգելով տաճկահայոց կյանքում՝ ծծում է սրա կենսատու հյութերը:

Ի՞նչ չարիք և այն:

«Տաճկահայաստանի քաղաքացին անհամեմատ ա-
վելի բարձր և գյուղացուց ամեն կողմից, վորի գեմ
գյուղացին չի կարողանում մրցել, այլ յենթարկվում և
նրա ազդեցությանը: Վորովհետև այժմյան հայ քաղա-
քացու բնավորության մեջ ազգային բարեմասնությու-
նից վոչինչ չկա, այլ այդ (քաղաքացու, Թ. Ա.) ազդե-
ցությունը բոլորովին յեսասիրական լինելով՝ նա
գյուղացու հարստահարողն էր շար-
քումը առաջին տեղն և բռնում: Այնտեղ
քրիստոնեյի տան «խեղ-բարաքյաթը», «մեռնի սուրբ
ավագանի շնորհի ազդեցությունը նվազ նշանակություն
ունեն»»:

Ի՞նչ անակնկալ հին ազգասերների համար: Վոր-
պիսի նորություն մեր իդեոլոգիական աշխարհում:

Մինչդեռ մենք միշտ բողոքում եյինք արտաքին
թշնամիների դեմ, ահա մի համարձակ դիտող ազադա-
կում և, թե գլուխ և բարձրացրել մի ներքին թշնամի,
վոր ավելի վտանգավոր և, քան արտաքինը: Մինչդեռ
մենք միշտ ուշադրություն եյինք դարձնում այն հրո-
սակների վրա, վորոնք գազանաբար ճյուղակոտոր եյին
անում հայրենի պարտեզը, ահա մի հմուտ տյգեպան
մեր հայացքը գեպի ցած և հրավիրում և ցույց տալիս
ստորաքարշ վորդերի մի բաղմություն, վոր արմատից
և կտրում ու չորացնում խնամած բույսերը: Մինչդեռ
մենք կարծում եյինք, վոր Տաճկահայաստանում քա-
ղաքն ու գյուղը հավասարապես փնամվում են կիսա-
լուսնի ու թիմից, ահա մի շինականապաշտ հայրենասեր

մեզ սթափեցնում է քնից՝ լուր տալով, թե արդեն ըսկըսվել է քաղաքի ու գյուղի որհասական պայքարը, սկսել է մի նոր, անաղմուկ, բայց անագործուն կռիվ՝ վոր մղում է միևնույն հասարակության մեջ դասակարգը դասակարգի դեմ, քաղաքացին՝ գյուղացու դեմ, փողը՝ հողի դեմ, շահագործումը՝ արդար աշխատանքի դեմ և ապրանքային արտագրությունը՝ բնական տնտեսության դեմ:

«Ամեն կարգի քաղաքացիները, — սկսում է մանրամասնորեն բացատրել մեր հեղինակը, — վորոնք պարագում են առևտուրով, արհեստներով, տիրության ծառայությունով, իրանց պարագմունքների արտադրած ուղղակի շահերով չբավականանալով՝ ցանկանում են և կողմնակի շահեր ունենալ: Այդ ամենը յուրյանց պատրաստ ծառայությունը հայանում են գյուղացուն, հողալով նրա զգեստեղենների պիտույքը և փոխառական դրամ: Այդ ոսկերացիայի մի տեսակը կոչվում է «տալաֆ»: Քաղաքացին գյուղացուն դիցուք տալիս է մի ոսմանյան վոսկի կամ նրա արժողությամբ ապրանք, վորը պարտավոր է մերձակա հունձին մի փոխառությանը յերկու չափ ցորյան տոկոս վճարել. այժմյան գնով յիժև հաշվենք, մի ոսմանյան վոսկին կադմված է հինգ մեջիդից, ուրեմն քաղաքացին գյուղացուց վեց ամսվա ընթացքում մի ոսմանյան վոսկուն $2\frac{1}{5}$ կամ հինգ մեջիդից յերկուսը տոկոս է ստանում: Յեթե վեց ամսվա ընթացքում տաս մեջիդիան բերում է չորս տոկոս, նշանակում է, վոր տարին ութ տոկոս է ընկնում կամ հարյուրին ութսուն: Այս ձևը աստիճանաբար սնանկանալու ձևն է, վոր հետզհետե գյուղացու հողը, կայքը

ընկնուի և վաշխառուի ձեռքը և այնուհետև նա դառնուի քաղաքացու արժաթագին սարուկը: Կան գյուղացիներ, վորոնք հանկարծական պիտույքի համար ծախում են իրենց ցանածի, աշնցանի կամ գարնցանի կանաչը. վորովհետև այդ կանաչների արդյունքը ակներև չի, քաղաքացիք ամենաչնչին գներով տեր են դառնում գյուղացու քրտանց արդյունքներին: Յերբ գյուղացին վորևե կերպով վտանգվում է, որինակ՝ յեթի դողանում, հափշտակում են նրա յեղները, անասունները կամ վարակիչ հիվանդություններից սատակում են, յեթի այրում են նրա դեղը և մարագը, յեթի յերաշխից, մարեխից կամ մկներից վոչնչանում է նրա ցանքը, այսպիսի հազար ու մի տեսակ հանգամանքներին յենթարկված գյուղացին փոխառու ընկերություններ չլինելուց՝ վերականգնելու մոռը դիմում է վաշխառուին, դնում է նրա վոտի տակ իր տունը, տեղը, կայքը, հողի սեփականության իրավունքը և ստանում է ցանկացած փողը այնպիսի պայմաններով և տոկոսով, վոր յերբեք չի կարողանալու հատուցանել ու այդ պիտուի գյուղացու և այն տանիքն էր կործանվում և նա կանգնել էր կերպով:»*

Շատ են խոսել հայ գրականության մեջ տաճկահայոց պանդխտության մասին: Հայտնի յե, վոր դեռևս Միքայել Նալբանդյանը թախծով դիտում էր, թե ինչպես հայ ազգը որբստորե թողնում է իր յերկիրները և կենտրոնանում է քաղաքներում, ինչպես ազգատությունն ստիպում է նրան թողնել իր տունն ու

* Նուրբը, էջ 15—16:

անդը, իր ընտանիքը և գնալ Պոլիս կամ այլ քաղաք աղքատությունից ազատվելու համար, վորտեղ նրան հանգեալ և գալիս հաղես նույն աղքատությունը, գուցե մի փոքր քաղաքային ամօք կերպարանքով: Հանրածանոթ և նշանավոր հրապարակախոսի սրտաշարժ նըկարագրությունը, վորի մեջ պատկերացնում և թե ինչպես մշակն իբրև գրաստ, իբրև մեքենա ծառայելով արտաավելի ոտարության մեջ տառ-քսան տարի՝ կամ մեռնում և այնտեղ՝ թողնելով իր ընտանիքը ծայրացյալ թշվառության մեջ և կամ վերադառնում և իր յերկիրը հասակ առած, ուժաթափ ու թոշնած, վերադառնում և իր ներկայությամբ իր աղքատ ու կարոտ ընտանյաց թիվն ավելցնելու համար և այլն: Հիշենք Տիգրան Ամիրճանյանին, վոր իր «Ուսյալ պանդուխտով» ու մանավանդ «Պանդուխտ վասպուրականցին իր ընկերոջը» հայտնի սրտառուչ վոտանավորով բոլորի ուշադրությունը հրավիրում եր հայրենիքի այս վերքի վրա և ազդակում:

«Որե որ ծով կրարձրանա, շատեր խեղդեց,
յաման, մեկ ճար...»

Սակայն արդարությունը պահանջում և ասել, վոր վոչ վոր, վոչ էլ նույն խել Միքայել Նալբանդյանը, չը կարողացավ յերևույթների խորքը թափանցելով բացատրել, թե ինչից և առաջանում տաճկահայի աղքատությունը, վոր նրան ստիպում և գիմել ոտար յերկիր, Պոլիս, Տրապիզոն, Գահիրե, Նյու-Յորկ և այլն: Այն ինչ թոխմախյանը պարզ գիտակցում և, վոր տաճկահայի պանդխտության պատճառը վաշխառությունն և, ուրեմն և վերջին կետում՝ անտեսական այն պայման-

ները, վորոնք հնարավոր են դարձնում վաշխառությունը:

«Վորքան վոր գյուղերը մոտ են քաղաքին, այդչափով ել ավելի խիտ յենթարկված են քաղաքացոց հարկատահարությանց և ավելի շատ աղքատ են: Որինակ՝ Վանա շրջապատի Թիմար անունով գավառը և Ուտունյաց գավառի հյուսիսային մասը Վասպուրականի բոլոր գավառներում ամենախիտ կերպով հարստահարված, ամենից սաստիկ վտանգված աղքատներն են. դրանցից և կաղմված վանեցի մշակներն մեծամասնությունն են»^{*}

«Այսօր, մեծարդոյ ունկնդիր,—գիմում և Թոխմախյանը հանդիսականներին,—քո տռաջից անդադար անց ու դարձ անողը, քո ծառայություններդ կատարողը, քո աղբ ու կեղտ մաքրող բրդղղած արարածը, վոր անցնում է իր ուրը գրաստի չարչարանքով, գիշերում է խոնավ, հոտած անկյուններումը, հեռու, կարոտ իր սիրելիներից, թաղվում է ախամայից քո քաղաքի ապականությանց մեջ, դաքոն է քոց հարկատահարված նախկին յերկրագործ, այժմյան ստրկացած մշակն է, վորի գուռը ժամանակով շատ մեծ էր քո դռնից, նորա հյուրասիր հարկի տակ շատ քո նմանները ասպնջականություն են գտել, շատ կարոտներ ոգնություն, ապաստանարան են գտել...»^{**}

* Նույնը, էջ 16—17:

** Նույնը, էջ 22—23: Ափսոս, վոր տեղի ողությունը Թուլ շի ապիս Թոխմախյանի ասածներն հաստատող փաստեր բերել Վ. Մարգարյանի մի աւանդելի հոգվածից, վորի վերնագիրն է

Թոխմախյանը չէ ժխտում թուրք կառավարութ-
 յան կեղեքումներն ու քրդերի հափշտակությունները,
 քայց սրանց յերրորդական, չորրորդական տեղ և տա-
 լիս իբրև վաղանցուկ ու դարմանելի չարիքներ: Նա
 իրավամբ կարծում է, վոր կառավարության հարստա-
 հարությունները մշտնջենավոր չեն, այլ կախված են
 կառավարության ձևի և ուղղության փոփոխությու-
 նից, իսկ քրդական հափշտակությունների դեմ կա մի
 փորձված միջոց—ինքնապաշտպանությունը, վորին դի-
 մոզների հետ, նրա տսելով, քրդերը պատկառանքով ու
 ակնածությամբ են վարվում: Թոխմախյանի անդրդի-
 լի համոզումով թուրքն ու քուրդը չեն տաճկահայ գյու-
 ղացու անողոք ու սոսկալի թշնամին, այլ տաճկահայ
 քաղաքացին, վոր բռնել ենախկին շահագործող դասա-
 կարգի—ազնվականության տեղը:

«Այժմ գյուղացին յերբ վոր փտանգվում և ան-
 արդար կառավարության կաշառակեր պաշտոնյաներից,

«Կիսրար կամ մշեցի հայու մը խոստովանանքը»: (Տեսեք «Հանդես
 քրական և պատմական», գիրք Ա. Մոսկվա, 1888, էջ 225—233):
 Հետաքրքիր ընթերցողը մեծապես կողտվե անձամբ կարդալով հիշ-
 քալ հոգվածք, վորի միտքն համառոտ արտահայտում են հետևյալ
 հատվածները:

«Մշո աշխարհ 25 տարիեն մարդ չմնար, դարիպություն 'տի
 ավրե մեր աշխարհ»:

«Մշո աշխարհ ազատե այս պարտքեն, վորպեսզի դա-
 լի պ ու թ յ ա ն չեթթան և մենք տնա մի եր կ ի ս ր ար են
 ազատիմք»:

«Կ ի ս ր ար են ու վ ա շ խ ա ու լ թ յ ու ն ն, ի բ ր
 ժ ա ն տ ա խ տ, Մ շ ա ա շ խ ա ր հ ն ի կ ո Ր ու ւ տ մ ա տ-
 ն ա ծ են և յեթե այսպես շարունակվի, այդ բարեբեր և ընդար-
 ձակ դաշտը անախորժ բուխրու վայր մը դարձած տեսնելու գըժ-
 ատխտությունն պիտի ունենամք»:

քրդերի համընթացութեաններէց, նա դիմում է իր կարող ազգակցի ոգնութեան, իսկ այդ արեւնակից կեղծավորը քաղցր խոսքերով տիրում է նրա ստացվածքին, դնում է նրա վզին հավիտենական սարկութեան տառաւորովը... Գլուխացին տերութեան պաշտոնյաների հարստահարութեան տակ հեծում է, քրդերի հարստահարութեան տակ տըրտնջում, բողոքում է, հարստահարող ազգակցի հարստահարութեան տակ անմըռուկ զոհի պես վռնէ անում է: Այսպես են փոխակերպվում համեստ յերկրագործ ընտանիքներից որահացին կարոտ մշակները:»*

Ակներե է, վոր Թոխմախյանն այլ կերպ է տեսնում ու գնահատում տաճկահայ իրականութիւնը, քան ուրիշները: Այլ է թշնամին, այլ է վիշտը, այլ է երողութիւնը:

«Հայի գութան, հայի գութան, վորի՞ համար
կջանաս,

Ո՞վ քեզիմով կտանջվի, վորի՞ն դու կուշտ
հաց կուտաս»...

Յերգեկ եր տալիս վանեցի գեղջուկին մեր մեծ ազգներդուն, Ռափայիկ Պատկանյանը՝ հասկացնելով, ժողտանջվողը հայ շինականն է, իսկ կուշտ ուտողը հարկ ու խաբը հավարդ համընթաց ալլաղին: **

* Թոխմախյան, նույն յերկ, Բ. գրքույկ, էջ 22:

** Յովելով պետք է նկատել, վոր ուսումնայ բանաստեղծութեան մեջ Ռափայիկ Պատկանյանի մտնվածից հետո կամաց-կամաչքապան տոնական, ազգական յերգերը: Վոչ վոր չէ լցված պայքարի տենչանքով, վոչ վոր չէ աղաղակում հերոսաբար:

Նույն այս տողերը կարող եր կրկնել նաև Թոխմախյանը, բայց նրա բերանում բոլորովին ուրիշ իմաստ կրտսանային հիշյալ խոսքերը: Յեվ յեթե նա ել տղաղակեր «Բաւ ե, գութան» և առաջարկեր «կոտրեք խոփը, տալ դարբնին սուր ու սուսեր կռելու», այն ժամանակ նրա քարոզած արյունալի պայքարը բոլորովին այլ բնույթ կունենար:

Այս նոր, ահավոր ու որհնյալ կոչը կապշեցնէր Արամյան ծերունիներին և Հայկա սերնդից շատերի ծնկները կը դողացնէր...

«Յերբ ապա սաստ, յերբ սրի շաշուն,
Փողի ձայներ, մարտի գոչուն»...

Հայ Պառնասում վաղուց լուել են պատերազմի Աստծուն — արի Արեսին նվիրած որհներգութիւնները, այնտեղ այժմ միայնակ իշխում է վավառու Աֆրոդիտեն շրջապատված մեղկ յերկրպագաներով: Գաղափարական տիտաններին այժմ հաջորդել է մի եռասպաշա սերունդ, վոր մոռացած կյանքի պայքարում տրոբված ու հարստահարված բազմութիւնը՝ գիշեր ու ցերեկ լիզում է կասկածելի գեղունու վտանները... Յեվ չկա մեկը, վոր խաբարդանով դաբա վտանը գաճաճներին այս տաճարից, վոր առաջ սրբազան դայաւթի ու խրոխտ բողոքի տաւն եր, իսկ այժմ դարձրել են հաւության ու ասփանքի ժողովարան:

III.

Տեսանք, թե ինչպե՞ս անմխիթաբաւական են ներկայանում թոխմախյանին հայ անցյալն ու ներկան։ Իսկ ի՞նչ է մտածում նա ազազայի մասին։ Արդյոք նշմարում է գալիք որեքում հայ գյուղացու համար վորեւ լուսատու ճառագայթ։ Չէ՞ վոր նրա որով ել ելին խոսում բարենորոգումների մասին, գոյություն ունեն 61-րդ հոդվածը, իսկ վոմանք ել յերազում ելին նույնիսկ ինքնավար հայրենիք։

Այս հարցին պատասխանելուց առաջ թոխմախյանը միամիտ ընթերցողին մի քանի կարեւոր, նախնական բացատրություններ ե տալիս, վորոնք վոչ միայն այն ժամանակվա, այլև այժմյան ընթերցողին անակնկալ նորություն կարող են թվալ։

Մեր հեղինակը պարզում է, վոր տաճկահայ հասարակությունը միապաղաղ զանգված չէ և վոչ ել համերաշխ շահերով ու ընդհանուր իղեալով տոգորված պարզ որդանիգմ, այլ կազմված է հակադիր հասարակական խմբերից, վորոնցից յուրաքանչյուրը իր շահերի ու հաճախ ել հարեանի փաստի տեսակետից ե նայում ապագայի բարենորոգումների կամ ազատագրության վրա։

«Չկա մի դասակարգ,—գրում է,—վոր 61-րդ հոդվածի իրադործմանը չցանկանար, բայց ամեն մի դասակարգը իր ցանկության բոլորովին տարբեր տեսակետովն են այդում դրավրա։ Ինտելիգենցիան և Տաճկաստանի եֆենդիների յերես ա-

աւծ խմբերը նայում են նրա վրա, վորպէս մի միջոցի վրա, վոր նրանց կմատակարարե իշխանական ազդեցութիւն, կառավարչական բարձր պաշտօններ. դրա համար լինի թիրեա, վոր այդ խմբերից մի քանիսը արդեն ձգտում են հասնելու ազնվութեան (պաշտակականութեան. Թ. Ա.): Վաճառական, կալվածատեր, չարչի քաղաքացիները լերագում են յուրյանց լայնածափալ ռաբրացիայի վրա, մի այնպիսի գործ, գործն միշտ կդաշնակցի ազգակիցն եւ իրար ապետական ուժը. և դրա համար ճանկաստանում արդեն գնվել են ու գնվում են լայնատարած գլուղեր, հողեր: Այժմ համարյա թե մեծ մասամբ հողատերերը քաղաքացիներ են. գյուղացիք համարյա վոչինչ չունեն»²

Այսպէս, քաղաքացիք տատանները սրած պատրաստվում են ավելի լավ պատաստուելու անտիրական զոհերին: Նրանք ձգտում են ազատ կարգերի, բայց նրանց ազատասիրութիւնը բղխում է գիշատողի հակումներից: Այս «հայրենասերները» հույս ունեն, թե ազգային կառավարութիւնը կըլինի մի հլու կոմիտեո, վոր կըծառայի ունեւորների շահերին:

Սակայն կա մի դասակարգ, վոր ձգտում է ազատութեան՝ առանց այլակեր հակումների: Այս դասակարգը գյուղացիութիւնն է:

Գյուղացու ակնկալութիւնը բոլորովին տարբեր է. նա սպասում է այն վիճակին, վորը յերբեք չեն վայելել և վոչ իր նախնիքը պատմական օրերումը: Նա սպասում է թշվառութեան արտասուքները սրբելու, կյանքի ան-

դորրության, ազատ շունչ քաշել, աներևան որեր, ապահովություն իր կյանքին, իր ստացվածքին և իր գործին: Նա ցանկանում և թողնել իրան միայն, վոր նա կարողանա լծել իր առատություն պարզևող գութանը, մշակել դարերով խոպան մնացած յերկիրը և ընտանեկան ցնծությամբ հնձել աշխատասեր ձեռքերի պտուղը, կարողություն ունենալ պատրաստ պահելու իր հյուրասեր սեղանը բոլոր անցավորների համար և նրանց հետ զվարթ սրտով բաժանել արդար վաստակի արդյունքը. յերջանիկ լինել ընտանիքով, յերջանիկ լինել դրացիներով և բոլոր գյուղացիներով: Մի շատ համեստ ու աշխարհաշեն ցանկություն վորին չեն հասնել բռնակալներն և իր ապետության որեր ու մը, չեն ել հասնել ինքն քնադոյության ժամանակին:»*

Յերբ Թոխմախյանը պնդում է, թե հայ գեղջուկի նախնիքն անցյալում տանելի վիճակ չեն ունեցել և չեն հասնել իրենց համեստ ու աշխարհաշեն ցանկությանը, ժողովրդասեր ընթերցողն անշուշտ ծափահարում և նրան՝ հիշյալ խոսքերը հայ ֆեոդալական անցյալի ճշգրիտ նկարագրություն ընդունելով: Սակայն յերբ նույն հեղինակը գրում է, թե նույն իսկ ինքնագոյության որերում, ապագա հայրենիքում անգամ հայ շինականը բարոր վիճակ չի ունենալու, այն ժամանակ այս անորինակ տողերի հանդեպ շատ հայրենասերներ կարող են բացականչել տարակուսանքով ու թերևս նաև դայրութով:

«Ինչպես, հայ գյուղացին յերջանիկ չի լինիլ նույն

խիկ ապագա ազատ հայրենիքում: Այն ժամանակ ել
հայ հողագործը տնքալով ու տրտունջով պիտի յիրգի.
«Դեհ, գոմշուկներ, յելեք, յելեք, արտը

յիրթանք աշխատենք
Հարկ ու խարջի վադեն մոտ ե, թափենք՝

արյուն ու քրտինք»,

ինչպես յերգում եր ոտարի լծի տակ դանված ժամանակ: Ապա ել ինչի՞ համար եյին պոռտի յերգը, քարոզչի խրախույսը, զոհերի հեծեծանքն ու մարտիկների մոնչյունը: Ինչի՞ համար եյին սողն ու տաքածամ մահը, ոճերի խայթումն ու անվերջ թափառումներն անապատում, յեթե հորդանանից այն կողմ անգամ տարաբախտները չեն գտնելու մեղրաբուլիս աղբյուրներ ու վողկուղալի հովանավոր այգիներ: Ինչի՞ անցան բյուրավորները հարմիր ծովից, յեթե ամենից ավելի բեռնավորվածներն ու վաստակածները չեն մըրտնելու և վայելելու Ավետյաց յերկիրը: Վոչ, թոխմախյանի դրածը զրչի պատահական խոտորումն և միայն: Նա անշուշտ այս չի կամեցել ասել...:

Բայց, ավանդ, ի՞նչ միամիտ հայրենասեր, հետևյալ հատվածներն անկասկած վկայում են, զոր մեր հեղինակի դրածը զոչ թե փետրի վերիտունն և, այլ մշակված համոզումն:

«Նա, որ դարավոր ժամանակով, սկսած պատմական ամենահին անցյալից հարստահարել և, այժմ հարստահարում և և հույս ունի ապագայում ել հարստահարելու ավելի քան դարձակ չափերով, նա այն ամենավտանգավոր դատակարգությունն և, զոր հնում ինչպես ազնվական և հայտնըվել, այժմ ինչպես կալվածատեր, իբրև պատվավոր

քաղաքացի և իբրև չարչի քաղաքացի, ի սկսած ապագային ել կմնա իմանալ, թե նա ինչ տեսնուկը կը կրնա»։*

Թոխմախյանը տեսանողի պայծառությամբ դուշակում է գալիքը և սարսռելով ապագայի արհավրալի տեսարաններից՝ սաստկությամբ հնչեցնում է հողի վշտի մեկամաղձոտ ու աղեկտուր նվագները...

«Յեթև այսպիսի տարբեր հակադրական մտքերով և դժգոհություններով կարելի լինի հասնել մի նպատակի, վորի համար գերբնական կամ գերզգային ուժ է հարկավոր, այն ժամանակ, ճշմարիտ է, վոր գյուղացու վզից կվերառնեն նրա քրտինքով տոգորված, ճնշող, կեղտոտ լուծը, նրա տեղը կդնեն նորը, փառքերով դարդարուն, վորի քրտինքը միշտ պետք է վնասալարյունով։ Նրան կասեն. «Այդ նոր լուծը թեև ծանր է, բայց քո սեփականն է, քաշի՛ր, հոգիդ դուրս գա։ Այն ժամանակ գյուղացին կզդա, վոր թեև քրդեր և արտաքին հարստահարողներ այլևս չկան, բայց իր վիճակը ավելի և ավելի ծանրացել է, ներկան անցյալից ավելի վատ։ Այդ ծանրության տակը նա ընկճվում է՝ կործանելով իր վրա հաստատած շինությունը, տրորվելով նրա տակը»։*

* Նույնը, էջ 21—22:

** Նույնը, էջ 16: Ռուսահայ ինդիվիդուալիստ, այսինքն մասնավոր սեփականությունը շատագուցող գրականություն մեջ մենք միայն մեկ հոգի յենք ճանաչում, վոր նույնպիսի սրահայաց ու հոգեհոս կարծիք ունեք ապագա ազատագրված հայրենիքի մասին:

Ձկան մի յեղ այս անդունդից դեպի վեր, դեպի
կատարն անամպ ու հստակ: Միթե աղքատությունն
ու խեղճությունն անխուսափելի ճակատագիր է հայ
շինականի համար, ինչպես և հարստությունն ու վե-
սությունը՝ շահագործողների համար: Ուրեմն ճիշտ և
սուրբ ու անսուրբ հայրերի դարեր շարունակ վար-
դապետած խոսքը, թե տնտեսական անհավասարու-
թյունը ամենարարի տարածու սահմանած անխախտելի
կարգն է մեր այս ունայն աշխարհում: Այս և թոխ-
մախյանի ասածը: Բայց չե՞ վոր նա հայրենի նոր լծի
մասին խոսելիս ասում էր.

«Այն ժամանակ, ճշմարիտ է, վոր գյուղացու
վզից կը վեր առնեն նրա քրտինքով տոգորված, ճնշող
կեղտոտ լուծը, նրա սեղը կղնին նորը, փառքերով
դարդարուն, վորի քրտինքը միշտ պետք է
լվանալ արյունով»:

Միշտիւ նախանդամն էր այն, վոր չհավատարմ քաղաքական
ազատութեան ամենարդիւ հատկութեան՝ այս ազատութեան հետ
միասին պահանջում էր տնտեսական վորոշ բարեփոխումներ, տ-
աանց վորոնց ամենայն ազատություն, նրա կարծիքով, տնտեսեց
է, վնասակար, ինչպիս ամենայն բնակավայրերում:

«Ազատությունը ըստ ինքյան լսկ խոսք է,—ասում էր
«Յերկրագործութեան հեղինակը,—և իրապես չէ կարող մարմնա-
նալ առանց տնտեսական խնդրի լուծվելուն: Վաղ մի աղաս կառա-
վարութեան, վաղ մի ազատ որենադրութեան չէ կարող փրկել մար-
դուն սարկութեանից, մինչև վոր այդ մարդը հողի վրա իրավունք
ունեցող չխոստովանվի... Այսոր յեթե մի ժողովարդ ստրուկ է,
յեթե նա հող չունի և յեթե հաշողի նրան հող ձեռք բերել, իր-
վունքը և ժամանակը պահանջում են տնտեսիկ ախպես, ինչպիս
ցույց է տալիս ներկա հարկը, ինչպիս ցույց է տալիս բանակա-
նությունը և վոր ախպես, ինչպիս հին որերից մնացած, ավան-
գական կառավարութեանը տնտեսիկ են մինչև այժմ, այսինքն»

Թերեւս նա զարգացնելով վերջին միտքը՝ հայ գյուղացու վերելթյունը նաև ներքին թշնամիներից տեսնում եր բանի ու սրի դաշնակցութեան մեջ: Թերեւս նա յեւ մեկն եր այն հանգուզներից, վորոնք աղաղակում են դուշագնաբար. «Ձեռ յեկել խաղաղություն ձգելու, այլ սուր»...

Վնչ. սխալ են այսպիսի յենթադրությունները: Թոխմախյանը թեև գիտակցում եր ներքին պատերազմի հնարավորությունը, բայց այն չարիք եր համարում՝ կարծելով, վոր ապագա ազգամիջյան ընդհարումները կարող են ամբողջ հասարակութեան կործանման պատճառ լինել:

«Յերբ մի ազգային մարմին ձգտում ե ինքնագոյութեան, ամենից առաջ նա լրջորեն ուշադրություն պետք և դարձնե, թե իր ներքին կենսական միավորութեան կապը ինչ պայմանների մեջ ե գտնւմ: Առանց այդ միութեան անքակ-

տելութեան կամ ազնիակոնութեան սեփականելով հողը և հաստրակ ժողովուրդը զրկելով իրավունքից: Վերջին գիպմանում ազգությունը ազատութեան չե ժողովրդին, նա փոխում ե միայն ներքալումը. մենք զրահանապես թշնամի ենք այդպիսի ազգութեան, ինչպես թշնամի չենք ընտակալութեան, ուր կամ ինչ կերպով վոր հայտնվի» (Մ. Նալբանդյան. «Յերկերը» Բ. հատոր, Բոստոն Դոնի վրտ, 1906, էջ 326—330 ու 374—375):

Ի դեպ, Թոխմախյանի վրա մեծապես ազդել և նախաճառներ ինչպե՛ս վկայում և հոգիամոծի մեջ շատ անգամ հիշված գրքույկի առաջաբանը, մեր հեղինակը շատ եր հարգում անվանի հրապարակախոսին:

«Յես բաղդավոր էյի համարում,—գրում ե Թոխմախյանը,—վոր պ. Շնամյանը ինձ թշնամանում եր Մ. Նալբանդյանի շարքին: Հանգուցայի հիշատակի հետ յիս ուրախութեամբ կը բարձրանամ Շնամյանների կառուցած կախադանի վրա»:

աւելի և սերտ համեմատելու թյան շատ վտանգավոր եմտնել մի անսովոր ծանրության տակ, վորին վոչ մի փթած, անհամեմատելութունից քայքայված կամ կեղծ համեմատելությամբ միացած հիմքերը չեն կարող դիմանալ և պատճառ կդառնան ավելի անողորմ վերակործանման: Այս կենսական ներքին ուժերից նշանավորը տնտեսական հարցն է: Դա կենսական շրջանառության հարաբերական կապն է մի հանրության մեջ գտնված ամեն աստիճանի դասակարգությանց համար:*

Վոր այս վերակործանումը արտաքին պատճառից չի առաջանա, այլ ներքին, վկայում է այն պարբերությունը, վորտեղ խոսելով գյուղացու թշվառ վիճակի մասին ապագա ազատագրված հայրենիքում⁹ Թոխմախյանն ավելացնում է.

«Այդ ծանրության տակ նա (գյուղացին. Թ. Ա.) ընկնում է, կործանելով իր վրա հաստատած շինությունը, տրորվելով նրա տակը»:

Թոխմախյանը ապագա վերակործանման հեռանք կարող սպառնալով նախագգուշացնում է քաղաքական ազատության ձգտողներին, առանձնապես գյուղացիության բարեկամներին, թե վտանգավոր է մտավոր-բարոյական վերածնությունից առաջ ձգտել քաղաքական վերածնության:

Այն հարցին, թե ինչն է հայ կյանքի անցյալը ներկա ու նույնիսկ գալիք աղիաների պատճառը, հեղինակը պատասխանում է, թե դասակարգային ու

⁹ Նույնը, հջ 23-24:

անհատական շահասիրությունը, համազգային դադա-
փարի դիտակցության բացակայությունը:

«Մենք ամենքս մեղ համար ենք ապրում, վոչ
վոք հասարակության ոգտի համար, վոչ վոք հայրե-
նիքի համար... Մենք այդպիս ենք ֆլասավել միշտ ա-
մեն ժամանակ. Ա հ ա մ ե ռ ա ղ գ ի թ ու յ լ կ ո ղ-
մ ը, վ ո Ր ք ա յ ք ա յ ե լ ե մ ե ղ ք ա ղ ա ք ա կ ա ն
մ ա Ր մ ն ի կ ա ղ մ ա կ հ Ր ա լ ու թ յ ու ն ի ց, վ ո Ր
ք ա յ ք ա յ ու մ ե հ ա ս ա Ր ա կ ա կ ա ն մ ա Ր մ ն ի
ա ն դ ա մ ա կ ց ու թ յ ու ն ի ց: Մեր ժողովրդական
ամեն մի դասակարգի անդամը իր վորոշ նպատակն
ունի, և իրենց նպատակը իրանք են միայն... Մենք
շինում ենք մեր տները մեր դրացու հայի փլատակ-
ների վրա, վոր մենք ենք ավերել, մեզանից յուրա-
քանչյուրը ապրում և իր ոգտին և ընկերի ֆլասի հա-
մար, խլում և արենակցի կտոր հացը իր վորովայնի
համար:»^{*}

«Միթե կարելի՞ յե, — հարցնում և Թոխմախյանը
միամտորեն դայլերի գլխին ավետարան կարդալով, —
վոր մարդ այն տան հիմքը քանդե, վորի տակ ինքը
պատասպարվում և: Միթե կարելի՞ յե տգրուկի պես բո-
լոր արյունը ծծիլ այն վողորմելուն, վորին գյուղա-
ցի, ռամիկ են անվանում: Իսկապես նա յե միայն,
վոր թեև անգիտակցաբար, բայց ամենի համար և
ապրում»:^{**}

Այն ժամանակ միայն կարելի յե ձգտել քաղա-
քական ազատության և հաստատոտպիս բարոր վիճակ

* Նույն յերկ, Ա. գրքույկ եջ 16—17:

** Նույնը, եջ 17:

սպասել գյուղացիութեան համար, յերբ բոլոր դաս-
կարգերը բարոյապես վերածնվին, թո՛թափեն իրենցից
«մեր ազգի թույլ կողմը», հրաժարվեն իրենց շահե-
րից և տոգորվեն այն բարձր գիտակցութեամբ, թե

«Ազգութեան գոյութիւնը ազգային անախառն-
թեան համար չէ, այլ ազգային բարեկենդանութեան
համար է, իսկ ազգային բարեկենդանու-
թեան հիմքը գյուղացու բարեկենդա-
նութեանն է»*։

Վնչ, հասարակական կազմի մեջ արմատական
փոփոխութիւններ ի կարիք չկա, — յերգվում է թոխ-
մախյանը. — գյուղացու բարոյութիւնը կախված է
շահագործող գասակարգերի գլխաւորութիւնից։ Առ-
ջիակական խնդիրը հեշտութեամբ է լուծվում։ Դարձի
յեկեք, մի մեծատունների, «բարի արարեք»։ Թաթա-
խեցեք ձեր ճկունքները ջրի մեջ և նրանով թացացը-
րեք աղքատ նազարտանների ծարավ քիմքերը, և ձեզ
այլ ևս չեն սպառնա վոչ քրտինքն արյունով լվանա-
լու անհաճո գործողութիւնն ու վոչ էլ վերակործա-
նումը։

Այսպիսով թոխմախյանը, վոր բավական մոտե-
ցել էր պատերազմի աստծու տաճարին, քայլերն հան-
կարծակի փոխելով մտնում է յերկերեսանի Յա-
նոսի աղոթափայրը. նա հանում է գլխից շողշողուն
սաղափարտը, ցած է բերում ուտերից ամրակուռ գրահը,
դեն է ձգում հուժկու ձեռքից պղտվատիկ սուրը և
քուրձ հագնելով ու գլխին մոխիր ցանելով սկսում է
ապաշխարութեան ու համերաշխութեան քարոզները...

Նա դափնանում է այն ուտողիան, թե պահպանե-

* Նույն յերկ. Բ. դրբույկ, էջ 26։

լով հանդերձ ժամանակակից անտեսությունը, վոր հիմնված է շահագործման ու անխնա մրցման վրա, մարդիկ կարող են լցվել սիրով գեպի Թշվառները և վերացնել նույն անտեսության առաջացրած անթիվ ու անհատակ չարիքները:

Նա հավատում է, վոր պատառուտող առյուծը կարող է հարդ ուտել յեղի պես, գայլն՝ արածել գառի հետ, և մանուկը ձեռքն անվնաս մտցնել իժի բույնի մեջ...

Ափսոս նա չէր լսում պատանի Դուրյանին, վոր արդեն հիասթափված սիրո քարոզներից՝ յերգում եր, Տնանկին դամբանը կանհետի վոտնակոխ,
Տնակին մեջ մարի առկայծ կանթեղն հող.
Այն մութին մեջ նոթի տղեկը կը հեծեն,
Դղյակն խրախ մինչև լույս ջահը կը հյուծեն:
Հարուստին կառք ժխորով կանցնի սրարշալ,
Հեքին դագաղն իր գերեզման լուռ իջալ...
Գեթսեմանին իջնող հրեշտակն դալկահար,
Վոր գեղ ծաղկի, արցունք ու փառք չհանչար,
Նորա ցուրտ գոգն աղքատը լոկ կսփռի.
Ճոխն ու տնանկ պատանքին մեջ կըլլան մի:
Կայծակնաթև թե մոռնեն մերթիկներ,
Թե «սիրեցեք զիրար», հեքն հոս չեն սիրեր...»



Իբրև վերջին խոսք պետք է ասենք, վոր, անշուշտ, ժամանակակից գաղափարներով տոգորված անձը կարող է չհամաձայնել մեր այս հեղինակի աշխարհայացքին կամ սրա այս ու այն կետին, սակայն և տյեպես հիմնվելով վերագրյալ հատվածներին

վրա՝ նա պետք է ընդունեն, վոր Արսեն Թոխմախյանը, չհաշված միայն Միքայել Նալբանդյանին, գաղափարապես շատ առաջ եր գնացել վոչ միայն նախորդ սերնդից, այլ և իր ժամանակակիցներից։

Վորքան ել հիշյալ հատվածները թուուցիկ ու անկապ արտահայտված լինեն, այնուամենայնիվ այնքան արժեքավոր են, վոր նրանց վրա սիրով ու հաճույքով կանգ կառնեն նոր վոգու թոթովանքների յուրաքանչյուր բանիմաց սիրահար։

Յեւ յեթե վոչ այժմ, գոնե այն ցանկալի գալիք որերում, յերբ հայոց գրականության պատմությունը կըլինի վոչ թե հեղինակների, յերկերի անունների ու թվականների մի խավար քառս, այլ գաղափարների պատճառաբանված, լուսառատ պատմություն, յերբ կըգնահատվի վոչ թե գրվածքի ծավալը, այլ իմաստը, — Թոխմախյանն անշուշտ իր արժանի տեղը կգրավեն հայ գյուղացու մյուս մեծանուն իդեոլոգների շարքում։


1914 թ. փետրվար,
Հին Բայազիդ։

ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՌԱՋԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ
ԱՎԱԶԱԿԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

ՄԵՐԿԵ-ԿՈՒԼԱԲԻ ՏԵՐ-ՄԶՐԱԽ

1791—1792 թ. թ.



Գետք ե տարբերել գաղափարական ավագակին ավագակ գաղափարականից:

Ավագակ գաղափարականը ձևանում ե, թե ծառայում ե գաղափարին, մինչդեռ իրոք սոսկ կողոտխիչ ե: Նա իդեալի դասալիքն ե՝ վարագուրված կեղծ բարեմասնություններով, ծայրահեղ յեսասեր ու հնարագետ ճիզվիտ՝ բազմազան կերպարանափոխություններով:

Գաղափարական ավագակն, ընդհակառակը, խանգարում ե հասարակական անդորրությունը և վտանատակ տալիս տիրող որենքները գաղափարական նպատակով: Այս տիպն իդեալի մարտիկն ե, թեև կռվի ու բողոքի ժամանակակից ձևերին չի հետևում. սա գործում ե լոկ այլասիրությունից դրդված և հանդես գալիս իբրև ասպետ առանց վարագուրվելու:

Ավագակ գաղափարականությունը հատուկ ե բոլոր ժամանակներին. չի հնանում, այլ միշտ ժամանակակից ե, հանդես ե գալիս ամեն դարում, թեև տարբեր անուններով: Մեր հասարակության պատմության վերջին տարիները, հատկապես համաշխարհային պատերազմի տարիներն ու մանավանդ Հայաստանի հանրապետության առաջին տարին ավագակ գաղափարականության վոսկեդար կարելի յե համարել, վոսկեդար, յերբ, ինչպես ասել ե մեկը, ռումը ձեռք ձգեցինք, գող դուրս յեկավ:

Սրան հակառակ՝ գաղափարական ավագակությունն անցած յերևույթ ե և հատուկ չե հասարակության զարգացման բոլոր աստիճաններին, Գաղափա-

րական ավագակը հանդես ե գալիս այն շրջանում, յերբ ժողովրդական ինքնագլխակցությունը քնած ե, չկա կազմակերպված լայն պայքար հանուն վոտնահարված իրավունքի ու շահագործվող բազմության, չկան քաղաքական-հասարակական հոսանքներ ու կուսակցություններ: Այս տիպը հնազանդության ծովի մեջ բողոքի ու ըմբոստության առաջին ու միայնակ ճիչն ե: Սա չի գտիլ գործունեյության նոր ձև, այլ տակավին խարխափում ե կովի, պայքարի ու բողոքի հին ձևերի շրջանակում:

Համաշխարհային գեղարվեստական գրականության մեջ ավագակ գաղափարականի տիպերը բազմաթիվ են, իսկ գաղափարական ավագակի ամենահայտնի պատկերացումը տեսնում ենք Շիլլերի «Ավագակներին» մեջ: Հայոց գրականության մեջ ավագակ գաղափարականության հերոսներից ամենահուշակվածը Բաֆֆու քավոր Պեարոսն ե («Սաչագործի հիշատակարանը»), իսկ գաղափարական ավագակի տիպը մարմնացած ե նույն վիպասանի Սահրատի խմբի հերոսների կերպարանքով («Ջալալեղի»), մի խումբ, վոր ճնշված ժողովրդի դիմադրական ույթի դեռ ես անկատար արտահայտությունն ե ցուցահանում:

*
* *
*

Հայ իրականության մեջ հանդես յեկած առաջին գաղափարական ավագակի մասին մեզ տեղեկություններ ե տալիս Հարություն Աստվածատրյան Արարատյանը իր «Жизнь Артемия Араратского» ինքնակենսագրության մեջ, վոր լույս ե տեսիլ Պետերբուրգում 1813 թվին ե հայերեն թարգմանվել միայն 80

տարի հետո, 1892 թվին Պերճ Պոռչյանի ձեռքով: Արարատյանն առաջին հայ գաղափարական ավագակի ժամանակակիցն է, պատանի հասակում տեսել է նրան Վաղարշապատում 1791—1792 թվականին և բարերարվել նրանից: Թողնելով հիշյալ զրբից այն հջերը, վորոնք վերաբերում են գաղափարական ավագակին հանդիպելու ու նրանից բարերարվելու հետաքրքրական հանգամանքներին, մեջ ենք բերում միայն այն հատվածները, վորոնք անմիջաբար վերաբերում են մեր նյութին:

Ահա Արարատյանի պատմածը բառացի:

«...Մեր գյուղումն (Վաղարշապատում թ. Ա.) սկսեցին խոսել, թե Մերկե-Կուլարի քահանան յուր գյուղից հեռացել է, և թե պատահած ժամանակը հարկավոր է նրանից յերկյուղ քաշել: Արդեն հայտնի յեր, վոր տերտերն ավագակությամբ է պարապում... Մըգրախ մականունով: Մըգրախ նշանակում է տեղ, վորը տերտերը կրում էր ձեռքին: Ճիշտ է, Մըգրախն յերբեմնապես պարապում էր ավագակությամբ, միայն նա ուրիշներից նրանով էր տարբերվում, վոր ինքը լինելով խիստ տաք, կրակոտ և բարկացկոտ, մի տեսակ էլ վրեժխնդիր բնավորության տեր մարդ, նա ավագակությունով առնու՞մ էր հարուստներից աղքատների վրեժը աշապես. — վորքան ձեռքից գալիս էր, հարուստներից խլում էր, տալիս աղքատներին. հարձես աշալիսով վերադարձնում էր աղքատներին իրանց սեփականությունը, վոր հարուստները յուրացրել էյին: Մերկե-Կուլարցիք դառն աղքատ ժողովուրդ էյին և միայն իրանց քահանայիցն էյին ամենատեսակ ոգնություն ստանում: Յեթե քահանան ճանապարհներին

պատահում եր խեղճ մարդի, նա նրան տանում եր ճանապարհ դնում մինչև անվտանգ տեղ և յեթե տեղեկանում եր, վոր այդ մարդը աղքատ ե, կարիք ունի, ոգնում եր նրան, վորքան յուր հանգամանքները ներում եյին: Իսկ ինքը տերտերը կողոպտված ավարից վռչինչ չեր վերցնում, բոլորն ուրիշներին եր բաժանում, այնքան լինել, մի խեղճ մարդ պատահելու Շատ գյուղերի աղքատ ընտանիքները որհնում եյին քահայայի կյանքը յուր արած բարերարության համար:»*

Այս հատվածները ցույց են տալիս, վոր առաջին գաղափարական հայ ավագակը զիտակցում եր սոցիալական անհավասարության անարդարությունը և յուրովի կռիւում նրա դեմ: Սակայն շարունակության մեջ տեսնում ենք, վոր նրա միտքն ամուր կաշկանդված ե կրօնի կապանքներով. մի կողմից նա ուշադրութեամբ պահում ե ճնշվածներին ու հարատահարվածներին, մյուս կողմից այս բանը մեղք ե համարում և արտասուք թափելով ապաշխարում:

«Հայոց յեկեղեցական որենքին համաձայն,—պատմում ե Արարատյանը,—պատարագիչ քահանան պարտական ե յուր մեղքերը խոստովանել ուրիշ քահանայի: Պատահում եր, վոր յեթե Մզրախն ուզում եր խոստովանել, քահանաներից մի քանիսն անարգում եյին

* «Վաղարշապատցի Հարություն Արարատյանի կյանքը» թարգմանեց ռուսերենից Պ. Պ. Թիֆլիս, 1892, էջ 63—67: Մերկե Կուլաք գյուղը, վոր այժմ կոչվում ե նաև պարզապես Կուլաք, գտնվում ե Յերևանի նահանգի Մուրմալու գավառում: Պոռյանը կարծում ե, վոր գյուղի անունը Մերկե-Կուլաք չալիտի լինի, այլ Ներքի կամ Ներքին Կուլաք: Այս սխալ ե: Գյուղը կոչվում ե Մերկե-Կուլաք, վոր քրդերեն նշանակում ե մարգագետիններով առատ (չիմտնով) Կուլաք:

նրա վարմունքը և հրաժարվում եյին խոստովանացնելուց: Մզրախը նրանց յերկյուղ տալով ստիպում եր, վոր իրան խոստովանացնեն և վրեժխնդիր լինելու սպառնալիքով հարկադրում եր իրան թողություն տալ: Վորքան և խորթ ե թվում մեղ նրա արարքը, բայց Մզրախն այնպիսի կատարյալ զղջմամբ և այնքան վըշտաբեկ սրտով եր իր մեղքերը քափում, վոր նրա հոգու անկեղծությունն իր թափած դառը արտասուքների հետ պարզ արտափայլում եր: Այս բանը միաձայն վկայում եյին նրա խոստովանեցնող բոլոր քահանաները՝ չնայելով, վոր շատերը Մզրախին յուր կուպիտ բնավորության և կամայականության պատճառով չեյին սիրում»:

Չափազանց ուսանելի յի պատմաբանի ու ամեն ընթերցողի համար հիշել, թե մեր աշխարհի կենտրոնում, Արարատյան դաշտում առաջին գաղափարական հայ ավագակի գործերը վոր թվականներին են կատարվում:

— 1791—1792 թվականներին, առաջ ու հետո: Ի՞նչ թվականներ են սրանք Յրանսիայի պատմության մեջ:

— Յրանսական առաջին հեղափոխության աշխարհացունց տարիներն են:

Այնտեղ՝ հեղափոխություն, գասակարգային կռիվ, քաղաքացիական պատերազմ, ըմբոստացած մասսա, ծածանվող կարմիր դրոշակ, ծխացող բարրիկադներ ու մարսելո՞ղ:

Այստեղ, մեզանում, պարսիկ խաների ու ֆարրաշների տիրապետություն, հայ հոգևորական ու աշխարհիկ բոլոնցքների անողորմ հարստահարություն,

անշշունջ տառապող բաղձություն, խունկ ու կնդրուկ,
աղոթքներ, աղոթքներ ու անվերջ աղոթքներ...

Այնտեղ՝ Միրարո, Դանտոն, Ռորեսպիեր, Մարնտ:
Այստեղ, մեղանում... Մերկի-Կուլարի միայնակ
Տեր-Մզրախ...

1919 թ. ապրիլ,
Ցերեան:

ՔԱԴ. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆԻ

ԻՆՔՆՈՒՐՈՒԹՅՆ (ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ) ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

I ԱՌԱՆՁԻՆ ԴՐՔՈՒՅԿՆԵՐՈՎ.

1. Խ ա չ ա տ ու ը Մ Բ ո վ յ ա ն.— Գրական-պատմա-
կան վերլուծություն, Վաղարշապատ, 1910,
2. Հ ո ղ ի վ ի շ ա ը Մ ու ը ա ց ա ն ի յ Ե ր կ Ե -
ր ու մ.— Գրական-պատմական վերլուծություն,
Վաղարշապատ, 1911,
3. Մ ի ք ա յ Ե լ Ն ա լ Բ ա ն դ յ ա ն.— Գրական-պատ-
մական վերլուծություն, Վաղարշապատ, 1913,
4. Հ ա յ դ յ ու ղ ը Հ ո վ հ ա ն Ն Ե Ս Թ ու մ ա ն յ ա -
ն ի յ Ե ր կ Ե ր ու մ.— Գրական-պատմական վեր-
լուծություն, Յերևան, 1924,
5. Կ ա ը լ Մ ա ը ք ս ի տ ն տ Ե ս ա կ ա ն դ ա ը -
դ ա ց մ ա ն Թ Ե ո ը ի ա ն.— Ա. տպ. Յերևան,
1925, Բ. տպ. Յերևան, 1926,
6. Ա ն հ ա յ տ ա ղ ա ն դ ա վ ո ը ն Ե ը հ ա յ ո ց մ Ե Ղ
XVI ու XVII դ ա ը Ե ր ու մ.— Հավիլված.— Գրա-
սերի որագրերից.— Վիեննա, 1926,
7. Հ ա ս, ս ա կ ու ը ա ժ.— Հայաստանի տնտեսա-
կան զարգացման պատմության խնդիրներին շուր-
ջը, Յերևան, 1926,
8. Ա ը ս Ե Ն Թ ո խ մ ա խ յ ա ն.— Գրական պատմա-
կան ակնարկ. Հավիլված.— Առաջին գաղափարա-

կան ավազակը հայոց մեջ—Մերկե-Կուլաբի Տեր-Մզրախ, 1791—1792 թ թ. («Հերմես» Հրատարակչության հրատարակություն), Յերևան, 1926:

II ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ.

9. Միջավայրի թեորիան («Գեղարվեստ» հանդես, Թիֆլիս, Բ. տարի, 1909, № 3),
10. Շիրվանզադեյի վեպերի նյութը («Արարատ» ամսագիր, Վաղարշապատ, 1910, № 4, Ապրիլ),
11. Մերկան տիլիզմը հայոց մեջ («Հորիզոն» որաթերթ, Թիֆլիս, 1913, №№ 268 ու 269),
12. Հանգույցի լուծումը.—Մ. Նալբանդյանի աշխարհայացքի բնորոշման խնդրի շուրջը («Հորիզոն» որաթերթ, Թիֆլիս, 1914, №№ 6, 10 ու 12),
13. Միմեոն կաթոլիկոսի «Հիշատակարանի» ծածկագիրը («Բանբեր Հայաստանի Գիտական Ինստիտուտի», գիրք Ա.—Բ, Վաղարշապատ, 1921—1922),
14. Կարծեցյալ Շապուհը.—«Պատմություն Շապուհի Բագրատունույ» գրքույկի հեղինակը վորոշելու խնդրի շուրջը («Բանբեր Հայաստանի Գիտական Ինստիտուտի» գիրք Ա.—Բ, Վաղարշապատ, 1921—1922),
15. Հայ ազատագրական շարժման յերկու հոսանք XVIII դարի վերջերում («Նորք» հանդես, Յերևան, 1922, Ա. գիրք),

16. Բ ա հ ր ա ն ու մ յ ու լ ք ը XVII—XVIII դ ա ռ հ-
ր ու մ («Նորք» հանդես, Յերևան, 1923, Բ, գիրք),
17. Յ ե ռ կ ը ա գ ո Ր ծ ա կ ա ն հ ա վ ե լ յ ա լ ա ռ-
դ յ ու ն ք ի ն ո Ր մ ա ն XVII—XVIII դարերում
ու XIX դ ա ռ ի ս կ ի զ ր ն ե Ր ու մ («Նորք»
հանդես, Յերևան, 1923, Գ, գիրք),
18. Հ ա յ ա ն դ ը ա ն ի կ ա լ ա Ր Բ ե Ր ա կ ա ն ն ու
ն ը ա խ մ Բ ա գ ի Ր ը («Վերելք» հանդես, Յե-
րևան, 1924, № 2—3),
19. Ֆ ը ա ն ս ա կ ա ն մ ե ծ հ ե ղ ա փ ո խ ու -
թ յ ու ն ն ու ժ ա մ ա ն ա կ ա կ ի ց հ ա յ ե Ր ը
(«Նորք» հանդես, Յերևան, 1924, Դ, գիրք),
20. «Կ ո մ մ ու ն ի ս տ ա կ ա ն Մ ա ն ի ֆ հ ս տ ի»
հ ա յ ե Ր ե ն թ ա Ր գ մ ա ն ու թ յ ու ն ն ե Ր ը
1887-ի ց մ ի ն չե 1924 թ. («Վերելք»
հանդես, Յերևան, 1924, № 4—5),
21. Հ ա յ ա ո տ ա ն ու մ Բ ա մ Բ ա կ ա գ ո Ր ծ ու -
թ յ ու ն ը վ ե Ր ա կ ա ն գ ն ե լ ու ե ը ն դ-
լ ա յ ն ե լ ու հ ն գ ա մ յ ա ա լ լ ա ն 1924—
1929 թ. թ. («Վերելք» հանդես, Յերևան,
1924, № 4—5):

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

22. Մ ի գ ա ղ տ ն ի ք հ ա յ վ ի մ ա կ ա ն ա Ր Ճ ա-
ն ա գ ը ու թ յ ու ն ն ե Ր ի մ ե ջ ու ն ը ա ն շ ա ն ա-
կ ու թ յ ու ն ը Հ ա յ ա ս տ ա ն ի տ ն տ ե ս ա կ ա ն զ ա Ր գ ա ջ մ ա ն
պատմության համար: (Զեկուցված է Հայաստա-
նի Գիտության և Արվեստի Ինստիտուտի պատ-

մական-հասարակագիտական բաժնում 1926 թվա-
կանի ղեկավարների 4-ին),

23. Մ ի հ ր ք հ ա յ ո ց մ ե ջ.—Նյութեր հայ կրոնի
պատմության համար,

24. Հայ շինականի ու գեղջկուհու աշխատավարձը
հինգերորդ դարում,

25. Վ ա ճ ա ու.—Հայաստանի տնտեսական զարգացման
պատմության խնդիրներից,

26. Հ ա յ ե ր հ ն գ ր ա վ ո ր ն ու մ հ ր ա ց ի ա յ ի
զ ա ր գ ա ց մ ա ն հ ա մ ա ո ո տ ու ր վ ա -
գ ի ծ ու

27. Ռ ու ս - հ ա յ ե ր հ ն տ ն տ ե ս ա գ ի տ ա կ ա ն
ա ե ր մ ի ն ա բ ա ն ա կ ա ն բ ա ո ա ր ա ն :

~~94/69~~



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0042080

1504

A $\frac{I}{6759}$

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

„ՀԵՐՄԵՍ“ ՀՐԱՏԱՐԱԿԱՅԻՆԻՑՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐԲԵՐԸ.

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ

1. Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆ—Ծանոթներ, ժողովածու:
2. ՄԻՔ. ՄԱՆԼԵԼՅԱՆ—Ժամանակակից Մեղրքամ:
3. ՍՏ. ՉՈՐՅԱՆ—Հեղկոմի նախագահը:
4. ՍՏ. ՉՈՐՅԱՆ—Գրադարանի Աղջիկը:

ՄԱՆԿԱԿԱՆ

5. ՍՏ. ՉՈՐՅԱՆ—Ելերտրական Լամպը, պատկերազարդեց
Մ. Արուստյան, գունատիպ:

ՈՒՍՈՒՄԱՍԻՐԱԿԱՆ

6. ԹԱԴ. ԱՎԴԱԼԲԵՆՅԱՆ—Արսեն Թոխմախյան: Հավելված.—Առաջին գաղափարական ավազակը հալոց մեջ.—Մերկե-կո. լարի Տէր-Մզրախ, 1791—1792 թ. թ.